ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 հոկտեմբերի 2011 թվականի N 145-Ա

ք. Հրազդան

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Սվետլանա Հովհաննիսյանին*** 2011 թվականի հոկտեմբերի 18-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2006 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N 93 աշխատանքային պայմանագիրը, կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել նրա վրա՝ մինչև ընտրության արդյունքում նոր գործադիր տնօրենի նշանակվելը:

Հիմք՝ գրավոր ծանուցումը:

2. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ